


ՏԵՂԵԿԱՆՔ

«Վանաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին » ավագանու որոշման նախագծի հանրային քննարկումների վերաբերյալ

Հ/հ	Տեղեկատվության բնույթը	Տեղեկատվության բովանդակությունը
1	Նախագծի իրազեկումը	Հանրության իրազեկումը սահմանված կարգով կատարվել է 18.11.2019 համայնքապետարանի պաշտոնական կայքով՝ www.vanadzor.am , ինչպես նաև հայտարարությունը և որոշումները փակցվել են համայնքապետարանի մուտքին և տարածվել են սոցիալական ցանցով
2	Հանրային քննարկման մասնակիցներ	<ol style="list-style-type: none"> 1. Ավագանու անդամներ <ul style="list-style-type: none"> • Սեյրան Ղամբարյանը • Վահե Կոռյանը • Հայկազ Սիմիկյանը • Դավիթ Հակոբյանը 2. Համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Արայոմ Գրիգորյանը 3. Համայնքի աշխատակազմի բաժնի պետեր և բաժինների աշխատակիցներ՝ <ul style="list-style-type: none"> - Վահե Գրիգորյանը - Էդիկ Հովսեփյանը - Արման Մովսիսյանը - Լուսինե Ստեփանյանը - Մարինե Չատինյանը - Լիլյա Դավթյանը - Հերմինե Զարմանյանը - Լիլիթ Խաչատրյանը 4. Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Դինարա Մխոյանը 5. Ինչպես նաև՝

		<ul style="list-style-type: none"> • Էրիկ Օհանյանը • Վարդան Դոլմաջյանը • Դավիթ Այվազյանը • Արտակ Հարությունյանը • Արմենուհի Բաբայանը • Աննա Անդրեասյանը • Գարուշ Սաղաթեյանը • Հայկազ Պետրոսյանը • Ժորա Գևորգյանը
3	<p style="text-align: center;">Հանրային քննարկումներին մասնակցության արդյունքները</p>	<p>Հանրային քննարկումներին մասնակից քաղաքի Տավրոս և Տարոն -3 թաղամասերի բնակիչների հնչեցրած առաջարկություններն առ այն, որ 2020 թվականին ասֆալտապատվեն իրենց փողոցները, տրվեց պարզաբանում, որ դա այլ գործընթաց է և պետք է որոշվի 2020 թվականի ընթացքում կապիտալ ծախսերի պլանավորման ընթացքում: Ավագանու անդամ Վահե Կոռյանը ևս ներկայացրեց բնակիչների կողմից նման առաջարկ:</p> <p>Ավագանու անդամ Սեյրան Ղամբարյանը կրկին անգամ հիշեցրեց, որ առանց քաղաքային հանրային գույքաբանների հնարավոր չէ զարգացնել զբոսաշրջությունը: Քանի որ նման ծրագրային նպատակ ներառվել է համայնքի զարգացման քառամյա ծրագրում, կայացավ համաձայնություն աշխատակազմ-ավագանի համագործակցությամբ գտնել լուծման տարբերակներ, որոնք թույլ կտան շահագրգռել գործարարներին, քաղաքում և ման ծառայություն կազմակերպելու նպատակով:</p> <p>Ավագանու անդամ Հայկազ Միմիկյանն առաջարկեց բյուջեից (կող` 06-3-1, տող 4238 «Հայքի հրապարակի ջրավազանի սպասարկում») հանել շուրջ 8 մլն դրամ հատակացումը Հայքի հրապարակի շատրվանների սպասարկման ծախսերը ֆինանսավորելու համար, քանի որ դա մրցույթում հաղթած կապալառուի երաշխիքային սպասարկման</p>

		պարտավորություն է: Քննարկումը վարողը նշեց, որ սպասարկման խնդիրն առկա է, գոյություն ունի հեղինակային իրավունք և սպասարկումը չի կարող իրականացնել այլ կազմակերպություն, քանի որ կխախտվի երաշխիքի պայմանները: Որոշվեց լրացուցիչ ուսումնասիրել և քննարկել այս հարցը մասնագետների և կապալառուի լիազոր ներկայացուցիչների մասնակցությամբ:
--	--	--

Աշխատակազմի քարտուղար  Արթուր Օհանյան